



Գրիգոր Զոհրապ

Փոքեր

Կիները ամենեն շատ սիրեցին այս խաղը, նենգությամբ, անակնկալով, սիրտհատնումով լեցուն, որ ամեն կողմ կը ճարակի հիմա, Փերա, Փրինքիփո, Պյոյուր Տերե, Քատըքյոյ:

Պոիճը՝ հաշիվ ու նրբություն կը պահանջեր միայն. մտքի ջանադիր աշխատությունն էր որ հոն կը գործեր, հաշոդ թուղթեն մեծագույն օգուտը քաղելով եւ ձախտողեն՝ նվագագույն վնասը քաշելու համար ոգորելով, տաժանելով խելքի խուլ պայքարի մը մեջ:

Փոքերը ոչինչ կուգեւ ասոնցմե. խաբեության ու կեղծիքի իսկատիպ աղն է, ուր ուժդ ու տկարությունդ հավասարապես պարտավոր ես ծածկել դիմացիներդ, երբեմն համեստությամբ, շփոթված, վարանքով, ամենափոքրիկ գրավ մը բռնելու համար, իբրեւ թե չվստահեիր թուղթիդ գործությանը, ու երբեմն խոյանալով հակառակորդիդ ամբողջ դրամին վրա, պլըֆի մը հանդգնության մեջ պարտկելով իրական տկարությունդ ու հակառակորդդ վախենն փախցնելով:

* * *

Ըսի ու կը հավտամ որ կիները ամենեն ճարտարներն ըլլան այս խաղին մեջ, իրենց բուն մթնոլորտին մեջ ըլլալուն համար անշուշտ:

Ուժն ալ սուտ, անուժությունն ալ սուտ, խոյանալն ալ սուտ, վարանիլն ալ սուտ, ընդունիլն ալ, մերժելն ալ, ամենքն ալ սուտ. ամբողջ կնոջական աշխարհի մը:

Հոս պշրանքը, ժպիտը, խոժոռումը, անուշ խոսքը, ամեն շարժումները եւ ամեն ականարկները պետք է դիտել, վերլուծել, կանգ առնել, չխաբվելու համար, եւ, ավելի գեշ, ծիծաղելի չըլլալու համար երբոր վարդագույն շուրթեր պոռան երեսդ ի վեր.

— Քառն կամ ֆլո՛շ . . .

Ու ասի ի բերան թողլով զքեզ հափշտակեն տանին ունեցածդ չունեցածդ, խնդալով քթիդ, ուրիշ անգամվան համար թուղթ խաղալու եղանակիդ վրա մտերմական խրատներ տալով քեզի, ուսդ ծեծելով մեղմիվ:

— Բարե՛կամս, թուղթ չուզողին ողլանսը չեն բռներ:

Եվ կամ թե՛

— Պլըֆը հայտնի էր. պետք էր տեսնել:

Իրա՞վ:

* * *

Կը մտածեն որ Փոքեր մըն է կյանքը գոր ամբողջ աշխարհ կը խաղա արդեն: Պլըֆյոռներ մեկ կողմեն, չունեցածը ունեցած ձեւացնողներ ու հաջողողներ, անթիվ անհամար. պայքար մը մահացու, ոխերիմ, որուն ամբողջ կյանքդ կը դնես, շարունակ ըսելով Մոն թո՛ւ:

Եվ դենդ մեկը կելլե, անծանոթ մը, չար ոգի մը, Դիպվածը թերեւս գոր չես ճանչնար, եւ որ գրավդ կը բռնե ու կը կործանե զքեզ չորս թուղթ նետելով առջիդ: Կամ թե մարդիկ կը տեսնես մեծ ուժի ու դրամի տեր, ամեն օր ամեն վայրկյան ձեռվրնին Ֆուլ ալեսս ունեցող մարդիկ, որոնք կանցնին Փասսոյի անընդհատ մրմունջի մը մեջեն, անկարող օգուտ քաղելու բախտեն՝ որուն երես առած, շփացած գավակներն են. մինչդեռ անդին ուրիշ մարդիկ, ձեռներեց, ճարպիկ ու հանդուգն, որ աշխարհներ կրնային վաստկիլ, տարիներով գույգ մը չունին ուվերթյուտ մը ընելու համար:

